

ՈՂՁՈՅՆ ՔԵՁ, ՄԱՐԻԱՄ

Դասընկերու՛յն՝ Արմիկ Յակոբեանին որ թախանձաղին
բերթուած մը կը խնդրէր ինծմէ:

Կը ձայնարկեն կոչնակներն արդ ցընծագին.
հաղաղութի՛ւն... ու կը լըռէ՛ր ամէն ձայն.
Անտառ, բըռչուն, հով, մինչեւ իսկ հին ուղին.
Կը դադրի պա՛հ մը տարբերուն հեւքը լայն:

Լա՛յն դաշտին մէջ մըշակն, — հոգի՛ն արտերուն —
Գանգո՛ւր գանգո՛ւր, ոսկեհեր գլո՛ւխն իր խոշոր
կը վերցընէ՛ր սըրբութեան մէջ լոյսերուն.
— Տո՛ւր, հասկն — ողկոյգ, մարգրի՛տ — յակի՛նք
բեռնաւոր...:

Ամպերն հիմա ծիրան հըրճումն կը բորեն.
Վերջին կայծեր կ'ոսկեգոծեն միջոց, լեռ.
Բազո՛ւկ — բազո՛ւկ բռնկած իրենց բերձ բաշէն.
Նռնիններն են աղօթաճոյլ սեւ մումեր:

... Ա՛րդ կոյր մ'յուսով լի, կը շոյէ՛ր սըրտագին,
Լոյսէն մըքար, մեռտ կոպերն աչքերուն.
Համբը կ'ուզէ՛ր որ իր շըրքները խըտղին.
Խուլն՝ որ հընչէ՛ր ականջին դափը բըրբռուն.

Աղօթակերպ խոհանք մ'յանկարծ կը պատէ
Լեռն՝ ու հովիտ, ծերը, տըգէտն ու գիտուն,
Կովն ու ոչխար, գա՛մբո՛ւ որ կ'իջնեն նո՛ր լեռնէ.
Իրերն համայն լո՛ւռ են, անշա՛րժ ու ճըլուն...:

Կաղը՛ բօքուե՛լ ոտքերուն կալն ու կապանք...:
— Աստուածածի՛ն, համբին լեզուն փոյժ պըմնէ՛.
Տո՛ւր խուլին ձայն, բա՛ց հէ՛ք կոյրին լոյսի հանք.
Եղիւր նեցո՛ւկ, ո՛յժ, փըրկէ կա՛ղն գայթումէ...

Գիւղի ժամէն շե՛շտ մը. — «Ողջո՛յն քեզ, Մարիամ»
Աչքեր երկի՛նք կը հային լուռ. համբուն վրայ,
Տե՛ս, կ'աղօթեն փոքրիկներն իսկ մերկանդամ...
Սըրտին՝ անդորր, հոգւոյն հաճա՛նչ կը տեղայ:

Աղբիւրին քով երկու հանանչ ու ըստուեր.
Հե՛ւք մը. յետոյ գիրկընդխառնում, տե՛նդ, սար—
սո՛ւռ...
... Մընա՛ց գուռին մէջ լիւղ շուշան մը երեր,
Տըժգո՛յն քարգման, — կու լայ աղբիւրն գայն ի
գո՛ւր...:

Կը խոնարհի՛ն հակատներ. պե՛րճն ու քարշամ...
Մինչ կը խոքին հարսերն իրենց կո՛ղն ահա՛,
Ու նոր մայրեր՝ կո՛ւրծէն իրենց գի՛րգ-գի՛րգ շա—
մամ.
— Երկնայի՛ն Մայր, անոնց մէջ լո՛յս, կա՛ր տեղա:

Կը ձայնարկեն կոչնակներն արդ տըրտմագի՛ն.
Համակ աղե՛րս են հոս մարդիկ եւ իրեր.
Ապաշաւի վայրկեա՛նն է մեծ ու խորին.
— Երկնայի՛ն Մայր, բարեխօսեա՛ր վասըն մեր...:

Ազո՛ւյ, 1933

ՅԱԿՈԲ ԱԴԱՄԵԱՆ

ԲԱՆՏԱՐԿԵԱՆՆԵՐԸ

Ձեռքեր ու ոտքեր, ամփոփ, կալ ու կապ.
Վրէժ ու հեծեծանք ունի ամէն բափ...:

Հոն լո՛ւռ կը սպասեն Օրերո՛ւ Հարկին,
Խըղճե՛ր արիւնտ, խըղճե՛ր աննիա՛գ...
Ոմանք կը քաւեն գողութիւն մը հին,
Ոմանք կատակ մը, կամ... անգո՛ւր երազ...:

Խո՛նչ՝. գագաններու պէս կը մըտնեն բանտ,
Ժանգերէ՛ հիւծած, ժանգերէ՛ հիւանդ...:

Պուրբէշ, 1936

ՅԱԿՈԲ ԱԴԱՄԵԱՆ

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Ո՛վ իմ Մուսա, ոգի՛ բըրբռուն,
Նուրբ մատներովդ իջեցուր վար՝
Քնարն ոսկեհունչ ու բազմալար,
Որ ես երգեմ Հաւատքն հայուն,
Հիւսեմ փառքերն հի՛ն դարերուն,
Սուրբ մըտածման կերտեմ տաճար:

Վեհ կոչումով լեցուած ա՛յս օր,
Քերթողներուն շունչովն անմեռ՝
Ո՛հ, ըլլայի՛ր քոչոյ Հրաւէր,
Քնարը ձեռքիս նըւագածոր՝
Ես երգեի՛ ծովակ ու ձոր՝
Իմ Հայրենի գմբուխտ սարեր:

Արարատի լո՛յս կատարէն,
Շունչովն օծուն սէգ արծիւին՝
Բեր ինձ քնարն աստուածային,
Որ ես երգեմ ուժն համօրէն,
Ցեղիս հոգին կոչեմ նորէն,
Ազատութեան կանգնեմ բագին:

Ո՛հ, Հայաստա՛ն, Մայր հոգեթով,
Հեռուն քեզմէ՛ լուռ՝ տըրտագին,
Քնարիս լարերն յար կ'արիւնին.
Ու ի՛նչ սրտեր լի կարօտով՝
Արեգնման կ'անցնին շուտով՝
Շուփին տակ քաց օտար ափին:

Հրափա՛յլ Մուսա, դուն որ մըտփի՛
Ներշնչման ա՛կն եղար պայծառ,
Ու բըրբռացիր որպէս քնար,
Շըրքներուն վրայ՝ շունչովդ յուրքի՛
Թող ասկէ վերջ լո՛յսըդ կաթի,
Հոգիներո՛ւն մէջ մըքավար:

Պուրբէշ

Եկո՛ւր, եկո՛ւր Ազատ Արեւ,
Քեզ կը սպասեմ իմ Հայրենեաց
Հորիզոնին դէմ գրկաբաց.
Լոյսիդ կարօտ՝ աստեղահեւ՝
Դուն շողա՛ միշտ մըտփիս վերեւ՝
Հանա՛ր Հայկեան վերածընած:

ԹԱԴԷՈՍ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ԱՆԹԱՌԱՄ

Մուրատ — Ռափայէլեան Վարժարանի Ծ. Դասու ընկերներու.

Երբ որ կ'անցնիս պուրակներէն ծաղկազարդ՝
Քեզ կը պատեն շողերն արփույն շափիւղայ.
Եւ երբ անփոյժ՝ դուն կ'այցելես վարդէ վարդ.
Երկինք ոսկի ուսերդ ի վար կը տեղայ:

Զարբնող բնութեան դաշնանըւազ երգերուն՝
Սիրատոյժը՝ կը փարի սիրտդ արտոյտի.
Տեսէ՞դ խրոպ՝ ալեակներդ գալարուն՝
Կ'երգէ առուն սէ՛րը կեանքիդ ծաղկատի:

Արեւելի շընորհն ես դուն անմըման,
Որ քեքեւտոն ուտոստելով հերարձակ՝
Կ'անցնիս քովէս, ի՛նչպէս պարիկ առտըւան՝
Շորորալով որպէս դիւրիչ մանիշակ:

... Բայց ո՛վ ես դուն. յաւերժահա՛րս մը երկնից,
Կամ քէ սիրոյ չըմաղագեղ քագուհի՞ն.
Ո՛վ քեզ շնորհեց վարդն այտերուդ կեանալից,
Լոյսն աչքերուդ՝ ո՛վ պարգեւեց երկնային:

Կ'ուզես խօսի՛լ, բայց կը լըռես շիկնելով,
Մինչ նայումսէ՛դ կ'իյնայ ժըպիտ մը տակաւ.
Մօտիկ ըլլա՛ր ես կը ցանկամ կարօտով,
Դէմքդ դիտել ու չայլայիլ քեզ բընաւ:

Մօտեցի՛ր ինձ, կո՛յս փափկասուն՝ եւ ըսէ՛
Ի՞նչ է անունդ, աղեղնածեւ շուրթէդ վար՝
Թող ծորի մեղմ ձայնը սըրտիդ սընդուէ՛,
Որ կը արոփէ քու կուրծքիդ տակ՝ սիրավառ:

Եւ դուն կեցած՝ գեղազըւարն առուն քով,
Լուռ՝ ամօթած՝ գիս կը դիտես շըւարուն.
Զեփիւն օծուն առաւօտեան հաշիշով՝
Ինձ կը բերէ բուրումն անոյշ բուփերուն:

Անծանօ՛ք կոյս, եկուր նըստինք առուն մօտ՝
Մէկտեղ վայլենք փառքը վըսեմ բընութեան.
Ծաղիկներո՛վ հիւսենք սիրոյ մեր նարօտ,
Վերէն՝ Աստուած քող մեզ օրհնէ յաւիտեան:

Պուրբէշ

ԹԱԴԷՈՍ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ